Անհատական Խնամքի Հաստատությունների Վերաբացման Արձանագրություն: Հավելված R

Վերջին փոփոխություններ. (Փոփոխությունները նշված են դեղին գույնով)

5/20/2021. Քթի և բերանի շրջանում դակման և դաջվածքի ծառայությունները թույլատրվում են: Դիմակից բացի, այս ծառայությունները մատուցող մասնագետները պետք է նաև կրեն դեմքի վահան՝ աչքերի պաշտպանության համար, և խրախուսվում են օգտագործել ավելի բարձրորակ դիմակներ՝ ապահովել տարածքի լավ օդափոխումը: Գոլորշով և թթվածնով բուժումը այլևս դասակարգված չէ որպես ակրոզոլ առաջացնող ընթացակարգ և թույլատրվում է դրրանք վերսկսել սույն Արձանագրության համաձայն:

COVID-19-ի դեպքերի տեմպը, հոսպիտալացումները և մահվան դեպքերը նվազել են և շարունակում են կայուն մնալ, սակայն COVID-19-ը շարունակում է մեծ վտանգ ներկայացնել համայնքների համար և բոլոր մարդկանցից և ձեռնարկություններից պահանջում է նախազգուշական միջոցներ ձեռնարկել և փոփոխել գործառնություններն ու գործողությունները՝ վարակի տարածման վտանգը նվազեցնելու համար:

Լոս Անջելեսի Շրջանի՝ «Անվտանգ Տնտեսության Դեռանգի Ծրագրի» «Դեղին Մակարդակ» մուտք գործելու պատճառով, այս արձանագրությունը թարմացվել է՝ վերացնելու որոշ տեղական գործունեության հատուկ սահմանափակումները: Հաստատությունները պետք է զգուշորեն գործեն և հետևեն սույն արձանագրության պահանջներին՝ իրենց բիզնեսի շրջանակներում COVID-19-ի հավանական տարածումը նվազեցնելու համար:

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչությունը, գիտական և հանրային առողջապահության փորձագիտական աջակցությամբ, որդեգրում է աստիճանական մոտեցում՝ թույլ տալու որոշ բիզնեսների գործունեության ավելի ապահով վերսկսումը: Ներքոհիշյալ պահանջները մասնավորեցված են անհատական խնամքի ծառայությունների համար, որոնք ներառում են, բայց չեն սահմանափակվում այն ծառայություններով, որոնք պահանջում են դիպչել հաճախորդի դեմքին կամ մարմնին: Նահանգի Առողջապահության Պատասխանատուի ներկայացրած պահանջներից բացի, բիզնեսներն ու գործնական մասնագետները պետք է նաև համապատասխանեն բոլոր կիրառելի օրենքներին, ներառյալ այս Արձանագրության մեջ նկարագրված բոլոր պայմաններին:

Քանի որ փակ տարածքներում գործունեությունը ավելի մեծ վտանգներ է պարունակում COVID-19-ի փոխանցման հետ կապված, հատկապես վատ օդափոխություն ունեցող տարածքներում, կարևոր է, որ հաստատությունները ապահովեն համապատասխան ֆիզիկական հեռավորության պահպանումը, հաճախորդներն ու աշխատողները մշտապես դիմակներ կրեն, ձեռքերի հիգիենան խստորեն պահպանվի, դիտարկվի և պահպանվի հաստատության ընդլայնված մաքրումն ու ախտահանումը, և օդափոխությունը բարելավվի:

Անձնական խնամքի ծառայությունները ներառում են, սակայն չեն սահմանափակվում էսթետիկական, մաշկի խնամքի և կոսմետոլոգիական ծառայություններով, ոչ-բժշկական էլեկտրոլոգիայով, մարմնի արվեստի մասնագիտական ծառայություններով, դաջվածքի սրահներով, միկրոբլեյդինգով և մշտական

Ասեղնագործ՝ այլևս չի հասանելի է

դիմահարդարմամբ, դակման սրահներով, մերսման թերապիայով (ոչ բուժական), արհեստական արևայրուքի սրահներով, մատնահարդարման, կանացի և տղամարդու վարսահարդարման սրահներով:

Հաճախորդները չեն կարող սնունդ և ըմպելիքներ օգտագործել հաստատության ներսում կամ դրա տարածքում գտնվելու ընթացքում:

Խնդրում ենք նկատի ունենալ. Սույն փաստաթուղթը կարող է վերանայվել հավելյալ տեղեկությունների և աղբյուրների հայտնվելուն զուգահեռ, ուստի պարբերաբար ստուգեք Լոս Անջելեսի շրջանի վեբ կայքը՝ http://www.ph.lacounty.gov/media/Coronavirus/՝ սույն փաստաթղթի և կից ուղեցույցների վերանայումների համար:

Այս ցուցակն ընդգրկում է.

(1) Աշխատատեղի քաղաքականություն ու գործելակերպ՝ աշխատողների առողջությունը պաշտպանելու համար

(2) Ֆիզիկական հեռավորություն ապահովող միջոցառումներ

(3) Վարակի վերահսկողություն ապահովող միջացառումներ

(4) Հաղորդակցություն աշխատակիցների և հասարակության հետ

(5) Կարևորագույն ծառայություններին անաչառ հասանելիություն ապահովող միջոցառումներ

Այս հինգ հիմնական ոլորտները պետք է հաշվի առնվեն ձեր հաստատության կողմից վերաբացման ցանկացած արձանագրության մշակման ժամանակ:

Այս արձանագրության մեջ ընդգրկված բոլոր բիզնեսները պետք է իրականացնեն ներքոհիշյալ բոլոր կիրառելի միջոցառումները և պատրաստ լինեն բացատրելու, թե ինչու որևէ չիրականացված միջոցառում կիրառելի չէ իրենց բիզնեսի համար:

Բիզնեսի անունը՝	
Հաստատության հասցեն՝	
Նախկին առավելագույն զբաղվածությունը՝	
Այցելուների թույլատրվող քանակը՝	

A. ԱՇԽԱՏԱՏԵՂԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊ՝ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ
(ՆՇԵՔ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԲՈԼՈՐ ԿԵՏԵՐԸ)

- ❑ Տնից աշխատելու հնարավորություն ունեցող բոլոր աշխատակիցներին հրահանգվել է աշխատել տնից: Սա չի վերաբերում այն ծառայություններին, որոնք, ըստ օրենքի, պետք է իրականացվեն թույլատրված վայրում:
- ❑ Խոցելի խմբում գտնվող աշխատակիցներին (65 տարեկանից բարձր տարիքի, քրոնիկական

Սահեցված Է՝ այլևս կիրառելի չէ

Արխիվացված է՝ այլևս ակտուալ չէ

առողջական խնդիրներ ունեցողներին, հղիներին) հնարավորության դեպքում հանձնարարվում է այնպիսի աշխատանք, որը հնարավոր կլինի կատարել տնից: Իրենց մտահոգությունները նրանք պետք է քննարկեն իրենց բուժաշխատողի կամ մասնագիտական առողջապահական ծառայության հետ՝ աշխատավայր վերադառնալու համապատասխան որոշումներ կայացնելու համար:

- ❑ Բոլոր աշխատակիցներին ասվել է հիվանդ լինելու կամ COVID-19-ով վարակված անձի հետ շփում ունենալու դեպքում չգնալ աշխատանքի: Աշխատակիցները պետք է գիտակցված լինեն Առողջապահության Վարչության՝ ինքնամեկուսացման և կարանտինի ուղեցույցին, եթե այն կիրառելի է: Աշխատավայրում արձակուրդի քաղաքականությունները վերանայվել և փոփոխվել են՝ համոզվելու, որ աշխատողները չեն պատժվում, եթե հիվանդության պատճառով մնում են տանը:
- ❑ Իրականացվում են մուտքի ստուգումներ, նախքան աշխատակիցները կմտնեն աշխատավայր՝ համաձայն LACDPH-ի [Մուտքի Ստուգումների Ուղեցույցի](#): Ստուգումները պետք է ներառեն հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության, ջերմության կամ դողի, ==համի կամ հոտի նոր կորստի== ստուգում, և պարզաբանում այն մասին, թե արդյոք այդ պահին անձին կարգադրված է մեկուսանալ կամ կարանտին պահպանել: Այս ստուգումները կարող են իրականացվել հեռավար կամ անձամբ՝ աշխատակցի ժամանման պահին: Հնարավորության դեպքում աշխատավայրում պետք է կատարվի նաև ջերմաչափում:
  - Բացասական Ստուգում (Թույլատրված է): Եթե վերջին 10 օրվա ընթացքում անձը չունի ախտանիշ(ներ) և չի շփվել COVID-19-ով հայտնի հիվանդի հետ, ապա այդ օրվա համար նրա մուտքը կարող է թույլատրվել:
  - Դրական Ստուգում (Թույլատրված չէ):
    - Եթե անձը լիովին պատվաստված չէ COVID-19-ի դեմ[1] և վերջին 10 օրվա ընթացքում շփվել է COVID-19-ով հայտնի հիվանդի հետ կամ ներկայումս գտնվում է կարանտինային հրամանների տակ, ապա նա չի կարող մտնել կամ աշխատել տարածքում, և նրան պետք է անհապաղ ուղարկել տուն՝ կարանտին պահպանելու: Տրամադրեք նրանց կարանտինի համար հրահանգները, որոնք կարելի է գտնել՝ ph.lacounty.gov/covidquarantine:
    - Եթե անձն ունի վերը նշված ախտանիշներից որևէ մեկը կամ ներկայումս գտնվում է մեկուսացման հրամանների ներքո, նա չի կարող մտնել կամ աշխատել տարածքում, և նրան պետք է անհապաղ տուն ուղարկել՝ տանը մեկուսանալու համար: Տրամադրեք նրանց մեկուսացման համար հրահանգները, որոնք կարելի է գտնել՝ ph.lacounty.gov/covidisolation:
- ❑ Աշխատակիցներին տրամադրվում է տեղեկատվություն գործատուի կամ կառավարության կողմից հովանավորվող բացակայության նպաստների մասին, որոնք աշխատակիցը միգուցե իրավունք ունենա ստանալու, որը ֆինանսապես կհեշտացնի տանը մնալը: Տես հավելյալ մանրամասնություններ՝ հիվանդության հետևանքով բացակայությունների կառավարական [ծրագրերի](#) օժանդակության և COVID-19-ի հետ կապված աշխատակիցների փոխհատուցումների վերաբերյալ, ներառյալ՝ աշխատակիցների՝ հիվանդության հիմքով բացակայությունների իրավունքները COVID-19-ի հիվանդության և COVID-19-ի դեմ պատվաստման դեպքում՝ համաձայն [2021 COVID-19-ի Հիվանդության Հիմքով Լրացուցիչ Վճարվող Արձակուրդի Օրենքի:](#)

---

[1] Մարդիկ համարվում են COVID-19- ի դեմ լիովին պատվաստված երկու (2) կամ ավելի շաբաթ հետո, երբ նրանք ստացել են երկփուլ դեղաչափերի երկրորդ չափաբաժինը (օրինակ՝ Pfizer-BioNTech կամ Moderna), կամ երկու (2) կամ ավելի շաբաթ հետո, երբ նրանք ստացել են մեկ դեղաչափ պատվաստանյութ (օրինակ՝ Johnson and Johnson [J&J]/Janssen): ==Այս ուղեցույցը կարող է կիրառվել նաև Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության կողմից արտակարգ իրավիճակներում օգտագործման համար թույլատրված COVID-19 պատվաստանյութերի համար (օրինակ՝ AstraZeneca / Oxford):==

- ❑ Տեղեկանալով, որ մեկ կամ մի քանի աշխատակիցների/գործնական մասնագետների, անկախ կապալառուների, ժամանակավոր աշխատողների թեստի արդյունքը դրական է, կամ նրանք ունեն COVID-19-ի ախտանիշների նման ախտանիշներ (հիվանդ), գործատուն պետք է տեղում ունենա պատրաստի ծրագիր կամ արձանագրություն, որպեսզի «հիվանդ(ներ)ը» մեկուսանան տանը, ինչպես նաև պահանջի, որ բոլոր աշխատակիցները, որոնք աշխատավայրում շփվել են «հիվանդի» հետ, անմիջապես ինքնակարանտինի ենթարկվեն: Գործատուի ծրագիրը պետք է ներառի COVID-19-ի թեստավորման հասանելիություն կարանտինի մեջ գտնվող բոլոր աշխատակիցների համար՝ պարզելու, թե արդյոք աշխատավայրում եղել են շփման լրացուցիչ դեպքեր, որոնք կարող են պահանջել COVID-19-ի վերահսկման լրացուցիչ միջոցառումներ: Տե՛ս հանրային առողջապահության ուղեցույցը [Աշխատավայրում COVID-19-ին արձագանքելու մասին]:
- ❑ Եթե սեփականատերը, կառավարիչը կամ օպերատորը 14 օրվա ընթացքում տեղեկանում է COVID-19-ի երեք (3) կամ ավելի դեպքերի մասին, ապա գործատուն պետք է այդ բռնկման մասին հաղորդի Լոս Անջելեսի Հանրային Առողջապահության Վարչությանը՝ (888) 397-3993 կամ (213) 240-7821 հեռախոսահամարներով կամ առցանց՝ [www.redcap.link/covidreport]: Եթե աշխատավայրում հայտնաբերվեն մի շարք դեպքեր, Հանրային Առողջապահության Վարչությունը կարձագանքի այդ մի շարք դեպքերին, որը կներառի վարակի վերահսկման ուղեցույցի և հանձնարարականների տրամադրում, տեխնիկական աջակցություն և աշխատավայրին հատուկ վերահսկման միջոցառումներ: Հանրային Առողջապահության գործերի վարավարչին կհանձնարարվի տվյալ մի շարք դեպքերի ուսումնասիրությունը, որպեսզի նա օգնի և ուղղություն ցույց տա հաստատությանը: Հանրային Առողջապահության Վարչությանը անհրաժեշտ կլինի անհապաղ համագործակցել հաստատության հետ՝ որոշելու համար, արդյոք այդ դեպքերը համարվում են COVID-19-ի բռնկում:
- ❑ Կիրառվում են այլընտրանքային, հաջորդական կամ հերթափոխային գրաֆիկներ՝ ֆիզիկական հեռավորության հնարավորությունը առավելագույնի հասցնելու համար:
- ❑ Բոլոր աշխատակիցներին հանձնարարվել է բուժօգնություն ստանալ, եթե իրենց ախտանշանները ծանրանում են, այդ թվում՝ կրծքավանդակի կայուն ցավը կամ ճնշումը, շփոթվածությունը, կամ կապտավուն շրթունքները կամ դեմքը:
- ❑ Աշխատակիցներին, ովքեր ուրիշների հետ են շփվում, անվճար տրամադրվում են [համապատասխան դիմակներ], որոնք ծածկում են քիթը և բերանը: Հավելյալ տեղեկությունների համար տե՛ս Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչության COVID-19 Դիմակների մասին վեբ-կայքը՝ [http://ph.lacounty.gov/masks]: Աշխատակիցը պետք է աշխատանքային օրվա ամբողջ ընթացքում կրի դիմակը, երբ շփվում է կամ հավանական է, որ կշփվի ուրիշների հետ: Խստորեն խորհուրդ է տրվում, որ անհատական խնամքի օպերատորները, որոնք մատուցում են ծառայություններ և հաճախորդներից պահանջում են հանել իրենց դեմքի դիմակը ծառայության ընթացքում, նման հաճախորդների հետ փակ տարածքում աշխատողներին տրամադրել աերոզոլի փոքր մասնիկների փոխանցումը պաշտպանող դիմակի առավել արդյունավետ տարբերակներ, ներառյալ, բայց չսահմանափակվելով, համապատասխան փորձարկված N95 (նախընտրելի) դիմակը, KN95, կամ կրկնակի դիմակները՝ հաշվի առնելով փակ տարածության մեջ COVID-19-ի տարածման ավելի մեծ վտանգը: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Լոս Անջելեսի Շրջանի DPH-ի COVID-19 դիմակների վերաբերյալ կայքէջը՝ [http://publichealth.lacounty.gov/acd/ncorona2019/masks]: Ըստ Նահանգի՝ այն անհատները, ում բժշկական մատակարարը խորհուրդ է տվել դիմակ չկրել առողջական խնդրի պատճառով և ովքեր աշխատում են այնպիսի տեղում, որտեղ կանոնավոր կերպով շփվում են մյուսների հետ, պետք է սահմանափակում չենթադրող այլընտրանք կրեն, ինչպիսին է ներքևի եզրին շղարշ ունեցող դեմքի վահանը, քանի դեռ նրանց առողջական վիճակը դա թույլ է տալիս: Նախընտրելի են այն տեսակի շղարշները, որոնք մարմնի ձևն են ստանում կզակի տակ: Միակողմանի փականներ ունեցող

դիմակները չպետք է օգտագործվեն: Բոլոր աշխատակիցները պետք է մշտապես դիմակներ կրեն, բացառությամբ անհատական գրասենյակում փակ դռներով միայնակ աշխատելիս կամ ուտելիս կամ խմելիս: Կանգնած ժամանակ աշխատակցի հասակը գերազանցող ամուր միջնապատերով խցիկներում աշխատող աշխատակիցների համար նախկինում կատարված բացառությունը չեղյալ է համարվում, մինչև հետագա ծանուցումը:

- Աշխատակիցներին հանձնարարվում է ամեն օր լվանալ կամ փոխարինել իրենց դիմակները:
- Դիմակների հետևողական և ճշգրիտ կիրառումն ապահովելու համար աշխատակիցներին արգելվում է ուտել կամ խմել՝ բացառությամբ իրենց ընդմիջումների ժամերին, երբ նրանք կարող են անվտանգ կերպով հանել իրենց դիմակները և մյուսներից ֆիզիկական հեռավորություն ապահովել: Ուտելիս կամ խմելիս աշխատակիցները պետք է մյուսներից մշտապես առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն պահպանեն: Նախընտրելի է ուտել կամ խմել դրսում և հնարավորության դեպքում մյուսներից հեռու: Խցիկում կամ աշխատավայրում ուտելը կամ խմելը ավելի նախընտրելի է քան ընդմիջման սենյակում ուտելը, եթե խցիկում կամ աշխատավայրում ուտելը մյուսներից ավելի շատ հեռավորություն և միջնապատեր է տրամադրում: COVID-19-ի փոխանցումը ավելի հավանական է, որ տեղի է կունենա այն ժամանակ, երբ աշխատակիցները միասին են, և դիմակներ չեն կրում:
- Զբաղվածությունը կրճատվում է, և աշխատողների միջև տարածությունն առավելագույնի է հասցվում ցանկացած սենյակում կամ տարածքում, որն աշխատակիցներն օգտագործում են ճաշերի և/կամ ընդմիջումների համար: Այս պահանջին հնարավոր է հասնել հետևյալ կերպ.
    - Նշել առավելագույն զբաղվածությունը, որը համապատասխանում է ընդմիջումների համար օգտագործվող սենյակներում կամ տարածքներում առնվազն վեց ոտնաչափ հեռավորության ապահովմանը, և
    - Փոփոխել ընդմիջումների կամ ճաշի ժամերը՝ ճաշերի և ընդմիջումների համար օգտագործվող սենյակներում կամ տարածքներում զբաղվածության թիվը նվազեցնելու համար, և
    - Սեղանները տեղադրել այնպես, որ ոտնաչափ հեռավորության վրա և ապահովել նստատեղերի միջև վեց ոտնաչափ հեռավորությունը, նստատեղերը հեռացնել կամ ժապավեններ կպցնել՝ զբաղվածությունը նվազեցնելու համար, հատակների վրա գծանշումներ դնել՝ հեռավորությունն ապահովելու համար, և նստատեղերը դասավորել այնպես, որ նվազագույնի հասցվի դեմ առ դեմ շփումը: Միջնապատերի օգտագործումը խրախուսվում է՝ տարածման հետագա կանխարգելման համար, բայց չպետք է համարվի զբաղվածության կրճատմանը և ֆիզիկական հեռավորության պահպանմանը փոխարինող միջոց:
    - Հնարավորության դեպքում հովանոցներով և նստարաններով ընդմիջման բացօթյա տարածքներ են ստեղծվում, որոնք կօգնեն աշխատակիցներին մյուսներից մշտապես 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն պահպանել:
- Այն աշխատողները, որոնք մշտապես պետք է լինեն հաճախորդների կամ աշխատակիցների հետ վեց ոտնաչափ հեռավորության սահմաններում, բացի դիմակներից, պետք է կրեն երկրորդական պաշտպանիչ միջոց (օրինակ՝ դեմքի վահան կամ անվտանգության ակնոց): Բոլոր աշխատակիցները պետք է նվազագույնի հասցնեն հաճախորդներից վեց ոտնաչափ հեռավորության վրա անցկացվող ժամանակը: Այն աշխատողները, ովքեր ծառայություններ են մատուցում, որը հաճախորդից պահանջում է հանել իր դիմակը՝ ծառայություն ստանալու համար (օրինակ՝ դեմքի մաքրում, դիմածածկույթի ծառայություններ, սափրում, դիմահարդարում և այլն), դիմակից բացի պետք է ունենան նաև հավելյալ դեմքի վահան, բայց խստորեն խրախուսվում են ավելի արդյունավետ դիմակ կրել, օրինակ՝ փորձված N95 դիմակ (նախընտրելի), KN95 դիմակ, կամ կրկնակի դիմակ: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Լոս Անջելեսի Շրջանի DPH COVID-19 դիմակի կայքէջը՝

Կասեցված է այլևս չգործում է

http://publichealth.lacounty.gov/acd/ncorona2019/masks:

- ❑ Դեմքի վահանները ընտրովի են այն աշխատողների համար, որոնք իրենց գործատուին ցույց են տալիս լիարժեք պատվաստումների ապացույց. դիմակ կրելը դեռևս պարտադիր է: Ամբողջովին պատվաստված աշխատողների համար, ովքեր COVID-19-ի դեմ ամբողջովին պատվաստված լինելու մասին ապացույց են ներկայացրել և նախընտրում են դեմքի վահան չկրել, գործատուն պետք է ստեղծի և պահպանի գրավոր զեկույց, որը կփաստագրի, որ այս աշխատողներից յուրաքանչյուրը իրենց ներկայացրել է ամբողջովին պատվաստված լինելու մասին ընդունելի ապացույց: Գործատուից չի պահանջվում պահել ներկայացված ամողջովին պատվաստված լինելու մասին ապացույցի կրկնօրինակը:
    - ○ Մարդիկ համարվում են COVID-19-ի դեմ ամբողջովին պատվաստված 2 դեղաչափից բաղկացած պատվաստանյութի (Pfizer-BioNTech or Moderna) երկրորդ դեղաչափն ընդունելուց ≥2 շաբաթ անց, կամ մեկ դեղաչափից բաղկացած պատվաստանյութը ստանալուց ≥2 շաբաթ անց (Johnson and Johnson [J&J]/Janssen):
    - ○ Հետևյալ տարբերակներն ընդունելի են աշխատակցի կողմից գործատուին որպես COVID-19-ի դեմ ամբողջովին պատվաստման ապացույց ներկայացնելու համար՝ լուսանկարով ինքնության հաստատման քարտ և պատվաստման քարտ (որը ներառում է պատվաստված անձի անունը, տրամադրված պատվաստանյութի տեսակը և վերջին դեղաչափի տրամադրման ամսաթիվը) ԿԱՄ պատվաստման քարտի լուսանկարը որպես առանձին փաստաթուղթ, ԿԱՄ այցելուի պատվաստման քարտի լուսանկարը, որը պահպանված է հեռախոսի կամ էլեկտրոնային սարքի մեջ ԿԱՄ պատվաստման մասին փաստաթուղթ առողջապահական ծառայություն տրամադրողից (որը ներառում է պատվաստված անձի անունը և հաստատում է, որ նա ամբողջովին պատվաստված է COVID-19-ի դեմ):
- ❑ Աշխատողների համար հասանելի են մաքուր դիմակներ՝ համռզվելու համար, որ կեղտոտվելու դեպքում դրանք կարող են փոխվել հերթափոխի ընթացքում: Հնարավորության դեպքում հաճախորդներին առաջարկվում են մաքուր դիմակներ, եթե նրանց դիմակները կեղտոտվում են:
- ❑ Աշխատողներին տրամադրվում են մաքուր, լվացվող կամ մեկանգամյա օգտագործման աշխատանքային վերնազգեստներ, որոնք փոխարինվում են օրական առնվազն մեկ անգամ, սակայն կեղտոտվելու դեպքում՝ ավելի հաճախ:
- ❑ Եթե օգտագործվում են դեմքի վահաններ և անվտանգության ակնոցներ, դրանք պետք է մաքրվեն և ախտահանվեն՝ համաձայն արտադրողի ցուցումների: Աշխատողները պետք է լվանան կամ ախտահանեն ձեռքերը դիմակներն օգտագործելուց կամ ուղղելուց առաջ և հետո:
- ❑ Աշխատողներին խրախուսվում են դիպչել իրենց աչքերին, քթին և բերանին:
- ❑ Անկախ կապալառուները ու ժամանակավոր աշխատողները պատշաճ կերպով պատրաստված են այս արձանագրություններին և ունեն անհրաժեշտ դիմակներ և անձնական պաշտպանիչ միջոցներ: Բիզնեսի սեփականատերերը պետք է քննարկեն այս արձանագրություններն այն կազմակերպության հետ, որը տրամադրում է անկախ կապալառուներ և/կամ ժամանակավոր աշխատողներ, նախքան նրանց աշխատանքի վերադառնալը:
- ❑ Աշխատանքային բոլոր կայաններն առանձնացված են առնվազն վեց ոտնաչափ հեռավորությամբ:
- ❑ Աշխատակիցներին թույլատրվում է հաճախակի ընդմիջումներ կատարել՝ իրենց ձեռքերն օճառով ու ջրով լվանալու համար: Աշխատակիցները պետք է օճառով շփեն իրենց ձեռքերն առնվազն 20 վայրկյան:
- ❑ Ընդմիջումների տարածքները, զուգարանները և ընդհանուր օգտագործման այլ տարածքները ախտահանվում են ստորև ներկայացված հաճախականությամբ, սակայն ոչ պակաս, քան աշխատանքային ժամերին օրական մեկ անգամ ՝ հետևյալ ժամանակացույցով.

Կասեցված է՝ այլևս ուժի մեջ չէ

- ○ Ընդմիջումների տարածքներ ______________________
- ○ Զուգարաններ ______________________
- ○ Այլ ______________________

- ❑ Աշխատակիցներին արգելվում է համատեղ սնունդ կամ ըմպելիքներ օգտագործել:
- ❑ Մաքրող և ախտահանող միջոցներ օգտագործող աշխատակիցները կրում են ձեռնոցներ և այլ պաշտպանիչ միջոցներ, ինչպես պահանջվում է արտադրանքի հրահանգներով:
- ❑ Ախտահանիչները և այլ պարագաները հասանելի են աշխատակիցների համար հետևյալ վայր(եր)ում.

  ____

- ❑ Ձեռքերի ախտահանման COVID-19-ի դեմ արդյունավետ միջոցը բոլոր աշխատակիցների համար հասանելի է հետևյալ վայր(եր)ում՝

  ____

- ❑ Յուրաքանչյուր աշխատողի տրամադրվում է իր սեփական գործիքները, սարքավորումները, աշխատանքային պարագաներն ու սահմանված տարածքը: Ձեռքերին հպվող իրերի համատեղ օգտագործումը նվազագույնի է հասցվում կամ բացառվում:
- ❑ Հնարավորության սահմաններում այս արձանագրությունն ու Հանրային Առողջապահության Վարչության՝ Կորոնավիրուսի կայքից ներբեռնած COVID-19-ին վերաբերող այլ նյութերը տրամադրվում են բոլոր աշխատակիցներին իրենց լեզուներով:
- ❑ Աշխատողները ընդգրկվում և աջակցվում են որպես կոլեգաներին ուսուցանողներ՝ ամրապնդելով ֆիզիկական հեռավորության և վարակի վերահսկման հրահանգների կատարումը:
- ❑ Այս ցուցակում նկարագրված բոլոր քաղաքականությունները, բացի աշխատանքային պայմաններին վերաբերող քաղաքականությունից, վերաբերում են նաև առաքման անձնակազմին և ցանկացած այլ կազմակերպության, որոնք կարող են տարածքում գտնվել որպես երրորդ կողմ:
- ❑ Այս արձանագրության պատճենը բաժանվել է յուրաքանչյուր աշխատակցի:
- ❑ Ընտրովի—Նկարագրել այլ միջոցառումներ.

  ____

B. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- ❑ Անհատական խնամքի հաստատության ներսում հաճախորդների թիվը պետք է լինի այնքան քիչ, որ բոլոր աշխատողներն ու հաճախորդներն ի վիճակի լինեն պահպանել ֆիզիկական հեռավորություն, սակայն ոչ մի դեպքում չպետք է գերազանցի անհատական խնամքի հաստատության առավելագույն զբաղվածության 75%-ը:
  - ○ Հաստատության ներսում հաճախորդների առավելագույն քանակը սահմանափակվում է .

    ____

- ❑ Իրականացվում են միջոցառումներ՝ աշխատողների և հաճախորդների միջև առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն ապահովելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ մատուցվում են սերտ շփում պահանջող ծառայություններ: Այս միջոցառումները ներառում են ֆիզիկական պատնեշներ կամ տեսողական ցուցանակներ (օր.՝ հատակի գծանշաններ, գունավոր ժապավեններ կամ նշաններ, որոնք ցույց կտան, թե որտեղ պետք է կանգնեն աշխատողները/հաճախորդները):

Կասեցված է՝ այլևս կիրառելի չէ

- Ժամադրությունները հերթագրվում են՝ խուսափելու ընդունարանում կուտակումներից, ապահովելու ֆիզիկական հեռավորությունը և բավարար ժամանակը՝ յուրաքանչյուր հաճախորդի այցից հետո պատշաճ մաքրման և ախտահանման համար: Առանց ժամադրության այցերը չեն թույլատրվում:
- Հնարավորության դեպքում օգտագործվում է գրանցման վիրտուալ տեխնոլոգիա, որն աշխատակիցներին ծանուցում է, երբ հաճախորդ է ժամանում: Հաճախորդներին խնդրվում է սպասել իրենց ավտոմեքենաներում՝ ընդունարանի տարածքներում սպասելու փոխարեն: Սպասման տարածքները պետք է փոփոխության ենթարկվեն՝ հնարավոր դարձնելու պատշաճ ֆիզիկական հեռավորության պահպանումը, այդ թվում՝ աթոռներն ու բազմոցները հանելու կամ դրանք միմյանցից հեռացնելու միջոցով: Դրսում սպասող անձինք պետք է միմյանցից պահպանեն վեց (6) ոտնաչափ հեռավորություն:
- Աշխատողները միանգամից չեն ընդունում մի քանի հաճախորդի: Մեկ հաճախորդի ծառայություններն ավարտվում են, որից հետո նույն աշխատողը նոր հաճախորդի է ընդունում:
- Աշխատողների աշխատանքային կայաններն առանձնացված են առնվազն 6 ոտնաչափով, և ընդհանուր տարածքները կազմաձևված են աշխատողների հանդիպումները սահմանափակելու և առնվազն 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն ապահովելու համար:
- Աշխատակիցներին հանձնարարվում է խուսափել ձեռքսեղմումներից, գրկախառնություններից կամ ողջույնի նմանատիպ ձևերից, որոնք խախտում են ֆիզիկական հեռավորությունը:
- Աշխատակիցներին խորհուրդ է տրվում չհավաքվել բազմամարդ տարածքներում:
- Վերանայվում է աշխատանքային գործընթացը և կատարվում են փոփոխություններ՝ վերցնելու-տանելու և առաքումների ընթացքում ֆիզիկական հեռավորության պահպանման համար: Տեղադրվում են դարակներ, արկղեր, տեղեկատու ցուցանակներ, կամ այլ փոխանցմանը օժանդակող միջոցներ՝ խուսափելու գրքերի ձեռքից ձեռք փոխանցումից:
- Անձնակազմի ժողովներն անցկացվում են այնպիսի տարածքում, որտեղ հնարավոր է պահպանել ֆիզիկական հեռավորություն, կամ անցկացվում են հեռախոսով, կամ վեբինարների միջոցով:

C. ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՄԵԽՈՅԱՌՈՒՄՆԵՐ

- Արդյունավետ օդափոխությունը փոքր աերոզոլային փոխանցումը վերահսկելու ամենակարևոր միջոցներից մեկն է: Փակ տարածքներում իրականացվող ծառայությունները, որոնք պահանջում են սերտ շփում շրջակավորված հաճախորդների հետ երկար ժամանակով, նման վայրերում խրախուսվում են բարձրացնել թարմ օդի օդափոխությունը: Մանրամասն տեղեկությունների համար տե՛ս Հանրային Առողջապահության Կալիֆորնիայի Վարչության Ժամանակավոր Ուղեցույցը՝ նախատեսված Փակ Միջավայրերում Օդափոխության, Ֆիլտրման և Օդի Որակի համար:
    - Համոզվեք, որ HVAC համակարգը գտնվում է պատշաճ, աշխատանքային վիճակում և, հնարավոր առավելագույն չափով, օդափոխությունն ավելացել է ընդհանուր տարածքներում և հյուրասենյակներում:
    - Պատուհանները և բնական օդափոխության այլ աղբյուրները հնարավորինս առավելագույն չափով բաց պահեք ամբողջ հաստատությունում:
    - Նկատի ունեցեք Շարժական Օդափոխիչների (PAC) ավելացումը այն վայրերում, որտեղ մաքուր օդի օդափոխությունը չի կարող ավելացվել, և արդիականացնել շենքի օդային զտիչները՝ հնարավորինս բարձր արդյունավետությամբ:

Կաղապարն է միայն

- Խնդրում ենք նկատի ունենալ. Օդափոխումը և ներսի օդի որակի բարելավման այլ տարբերակները լրացնում են, այլ ոչ թե փոխարինում պարտադիր պաշտպանիչ միջոցներին, այդ թվում՝ դեմքի ծածկոցներ կրելուն (բացառությամբ՝ որոշ բարձր ռիսկային միջավայրերի, որոնք պահանջում են պատշաճ շնչառական պաշտպանություն), մարդկանց միջև առնվազն վեց ոտնաչափ հեռավորության պահպանմանը, հաճախակի ձեռքերը լվանալուն և տարբեր տնային տնտեսությունների մարդկանց համախմբող գործողությունների սահմանափակմանը:

- ❑ Այն հաստատություններում, որոնք չեն շահագործվել, պետք է տաք և սառը ջրի հարմարանքներից յուրաքանչյուրը հոսեցնել վերաբացումից 5 րոպե առաջ՝ հաստատության խողովակներում հին ջուրը փոխարինելով թարմ և անվտանգ ջրի պաշարով:
- ❑ Այցից առաջ կապվում են հաճախորդների հետ՝ ժամադրությունը հաստատելու և հորդորելով տալու/խնդրելու հետևյալը.
  - Բերեք և այցի ընթացքում օգտագործեք դիմակ (նախընտրելի է՝ սկզբունքներով):
  - Մեքենայում սպասեք՝ մինչև ձեր ժամադրության ժամը:
  - Հանդիպմանը մի բերեք երեխաների, ընկերների, հյուրերի, գիտողների կամ այլ մարդկանց:
  - Եթե հանդիպումը նախատեսված է երեխայի համար, ծնողը կամ խնամակալը կարող է սպասել սրահում, սակայն բոլորից պետք է վեց ոտնաչափ հեռավորություն պահպանի և դիմակ կրի:
- ❑ Հաստատություն ժամանող այցելուներին հիշեցվում են, որ նրանք հաստատությունում կամ դրա տարածքում գտնվելու ամբողջ ընթացքում դիմակ կրեն: Դա վերաբերում է բոլոր չափահասներին և 2 տարեկան և ավելի մեծ երեխաներին: Միայն այն անձինք, ում բուժաշխատողը հանձնարարել է չկրել դիմակ, պետք է կրեն դեմքի վահան, որի ներքևի եզրին ամրացված է կտոր՝ Նահանգային հրահանգների համաձայն, եթե իրենց վիճակը թույլ է տալիս: Նախընտրելի է կրել կզակին ամուր ձգվող կտորով վահան: Չի կարելի օգտագործել միակողմանի փականներով դիմակներ: Հաճախորդները կարող են հանել իրենց դիմակները, որպեսզի ստանան այն ծառայությունները, որոնք պահանջում են դիմակի հեռացում, (օր.՝ դեմքի մաքրում, դիմածածկույթի ծառայություններ, սափրում և այլն): Ձեր աշխատակիցների և այլ այցելուների անվտանգությանը աջակցելու համար, դիմակներ պետք է տրամադրվի այն այցելուներին, ովքեր ժամանում են առանց դրանց:
- ❑ Հնարավորության դեպքում առանցամատյանում պահպանեք բոլոր հաճախորդների կոնտակտային տվյալները (անուն, այցելության ամսաթիվը/ժամը, հասցեն, հեռախոսահամարը և էլ. փոստի հասցեն): Սա կարող է արվել գրանցման ժամանակ:
- ❑ Իրականացվում է ախտանիշների ստուգում՝ նախքան այցելուներին կթույլատրվի հաստատություն մտնել: Ստուգումները պետք է ներառեն հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության, ջերմության կամ դողոցքի գրանցում և արդյոք անձը այդ պահին գտնվում է մեկուսացման մեջ կամ պահպանում է կարանտինի հրահանգները: Այս ստուգումները կարող են կատարվել անհատապես կամ այլընտրանքային եղանակներով, օրինակ՝ առցանց ստուգման համակարգերով կամ հաստատության մուտքի մոտ փակցված նշանների միջոցով, որոնք նշում են, որ այդ ախտանիշներով այցելուները չպետք է հաստատություն մտնեն:
  - Բացասական Ստուգում (Թույլատրված): Եթե անձը վերջին 14 օրվա ընթացքում չունի ախտանիշ(ներ) և շփում COVID-19-ի հաստատված դեպքի հետ, նրանց կարելի է թույլատրել մուտք գործել և ծառայություններ ստանալ:
  - Դրական Ստուգում (Չթույլատրված).
    - Եթե անձը վերջին 14 օրվա ընթացքում շփում է ունեցել COVID-19-ի հաստատված դեպքի հետ կամ ներկայումս գտնվում է կարանտինի հրամանների ներքո, ապա նա չի կարող մուտք գործել, նրան պետք է անհապաղ տուն ուղարկել՝ տանը

Վարակված է այլս չիրական է

կարանտին պահպանելու համար: Նրան տրամադրեք կարանտինի հրահանգները, որոնք կարելի է գտնել ph.lacounty.gov/covidquarantine:

- Եթե անձի մոտ կան վերը նշված ախտանիշներից որևէ մեկը կամ ներկայումս գտնվում է մեկուսացման հրամանների ներքո, ապա նա չի կարող մուտք գործել, նրան պետք է անհապաղ տուն ուղարկել՝ տանը մեկուսանալու համար: Նրան տրամադրեք մեկուսացման հրահանգները, որոնք կարելի է գտնել ph.lacounty.gov/covidisolation:

  - Ստուգման ժամանակ և՛ ստուգողը, և՛ հաճախորդը պետք է դիմակներ կրեն:

- ❑ Այն ծառայությունները, որոնք պահանջում են ձեռնոցների կրում, պետք է կրեն մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ: Ձեռնոցների կրումը պետք է լինի ձեռքերի լվացմանը համատեղ, այլ ոչ թե փոխարինի դրան:
- ❑ Տարբեր հարմարությունները, այդ թվում՝ սնունդը, սուրճը, ջուրը, ինքնասպասարկման կետերը և հաճախորդների համար նախատեսված այլ առարկաները հեռացվեն ընդունարանի տարածքներից: Սնունդ և ըմպելիքներ չպետք է մատուցվեն հաճախորդներին:
- ❑ Ձեռքերի ախտահանիչները, ախտահանող անձեռոցիկներն ու աղբարկղերը հաճախորդների համար հասանելի են սպասման տարածքներում և աշխատանքային վայրերում:
- ❑ Աշխատողներն օգտագործում են պահանջվող պաշտպանիչ բոլոր միջոցները, այդ թվում՝ աչքերի պաշտպանիչ միջոցներ և ձեռնոցներ, երբ դրանք անհրաժեշտ են ծառայության համար:
  - Աշխատողները պետք է ամբողջ ժամանակ կրեն դիմակներ:
- ❑ Այն աշխատողները, ովքեր ծառայություններ են մատուցում, որը հաճախորդից պահանջում է հանել իր դիմակը՝ծառայություն ստանալու համար (օրինակ՝ դեմքի մաքրում, դիմածածկույթի ծառայություններ, սափրում, դիմահարդարում և այլն), դիմակից բացի պետք է ունենան նաև դեմքի վահան, բայց խստորեն խրախուսվում են կրել COVID-19- ի աերոզոլային փոքր մասնիկների փոխանցումը պաշտպանող ավելի արդյունավետ դիմակ, օրինակ՝ փորձված N95 դիմակ (նախընտրելի), KN95 դիմակ կամ կրկնակի դիմակ: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Լոս Անջելեսի Շրջանի DPH COVID-19 դիմակի կայքէջը՝ http://publichealth.lacounty.gov/acd/ncorona2019/masks:
- ❑ Դեմքի վահանները կամընտրական են այն աշխատողների համար, որոնք իրենց գործատուին ցույց են տալիս լիարժեք պատվաստումների ապացույց. դիմակ կրելը դեռևս պարտադիր է: Ամբողջովին պատվաստված աշխատողների համար, ովքեր COVID-19-ի դեմ ամբողջովին պատվաստված լինելու մասին ապացույց են ներկայացրել և նախընտրում են դեմքի վահան չկրել, գործատուն պետք է ստեղծի և և պահպանի գրավոր գեկույց, որը կփաստագրի, որ այս աշխատողներից յուրաքանչյուրն իրենց ներկայացրել է ամբողջովին պատվաստված լինելու մասին ընդունելի ապացույց: Գործատուից չի պահանջվում պահել ներկայացված ամողջովին պատվաստված լինելու մասին ապացույցի կրկնօրինակը:
  - Մարդիկ համարվում են COVID-19-ի դեմ ամբողջովին պատվաստված 2 դեղաչափից բաղկացած պատվաստանյութի (Pfizer-BioNTech or Moderna) երկրորդ դեղաչափն ընդունելուց ≥2 շաբաթ անց, կամ մեկ դեղաչափից բաղկացած պատվաստանյութը ստանալուց ≥2 շաբաթ անց (Johnson and Johnson [J&J]/Janssen):
  - Հետևյալ տարբերակներն ընդունելի են աշխատակիցը կողմից գործատուին որպես COVID-19-ի դեմ ամբողջովին պատվաստման ապացույց ներկայացնելու համար՝ պատվաստման քարտ (որը ներառում է պատվաստված անձի անունը, տրամադրված պատվաստանյութի տեսակը և վերջին դեղաչափի տրամադրման ամսաթիվը) ԿԱՄ պատվաստման քարտի

Կասեցված է՝ այլևս կիրառելի չէ

լուսանկարը՝ որպես առանձին փաստաթուղթ, ԿԱՄ այցելուի պատվաստման քարտի լուսանկարը, որը պահպանված է հեռախոսի կամ էլեկտրոնային սարքի մեջ ԿԱՄ պատվաստման մասին փաստաթուղթ առողջապահական ծառայություն տրամադրողից (որը ներառում է պատվաստված անձի անունը և հաստատում է, որ նա ամբողջովին պատվաստված է COVID-19-ի դեմ):

- ❑ Գործի ընթացքում և յուրաքանչյուր հաճախորդի սպասարկումից հետո բոլոր գործիքների և մակերեսների մաքրման և ախտահանման ժամանակ պետք է կրել մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ:
- ❑ Մշակվել է մաքրման և ախտահանման ծրագիր հետևյալ առարկաների ու տարածքների համար.
  - Բազմամարդ տարածքները:
  - Ընդհանուր տարածքները և առարկաները, որոնց հաճախակի են դիպչում (օր.՝ սեղանները, դռների բռնակները, վարդակները, հեռախոսները), որոնք պետք է աշխատանքային ժամերին օրական առնվազն մեկ անգամ ախտահանվեն Շրջակա Միջավայրի Պաշտպանության Գործակալության կողմից հաստատված ախտահանիչներով:
  - Ուժեղացրեք բարձր շփման տարածքում գտնվող մակերեսների կամ դիմակ չկրող անձանց ազդեցությանը ենթարկվող մակերեսների մաքրումն ու ախտահանումը:
  - Բոլոր բռնակները, խողովակները, ցողելու ցնցուղները և այլ իրերը (օր.՝ արհեստական արևայրուքի մահճակալներ/տաղավարներ)՝ յուրաքանչյուր հաճախորդի օգտագործումից առաջ և հետո:
- ❑ Օգտագործվում են Շրջակա Միջավայրի Պաշտպանության Գործակալության կողմից հաստատված հիվանդաանոցային կարգ ունեցող ապրանքներ՝ մաքրելու և ախտահանելու համար այն ամենը, ինչի հետ շփվել է հաճախորդը, այդ թվում՝ բուժման սեղանները, դեմքի հենման միջոցները, աթոռները և այլն: Կոնտակտային ժամանակի համար՝ հետևեք արտադրողի խորհուրդներին:
- ❑ Յուրաքանչյուր հերթափոխի ժամանակ նշանակվում է մեկ աշխատակից, որն անհրաժեշտության դեպքում կվերահսկի և կիրականացնի մաքրման և ախտահանման լրացուցիչ աշխատանքներ:
- ❑ Իրենց հերթափոխի ընթացքում աշխատակիցներին ժամանակ է տրամադրվում մաքրման աշխատանքների համար: Մաքրման աշխատանքները հանձնարարվում են աշխատանքային ժամերի ընթացքում և կազմում են աշխատողի աշխատանքային պարտականությունների մի մասը:
- ❑ Հաճախորդների հագուստը դնելու համար կան կարծր մակերեսով, ոչ ծակոտկեն աթոռներ, կարծր մակերեսով մեծ զամբյուղներ, կամ պլաստիկե զամբյուղներ:
- ❑ Յուրաքանչյուր հաճախորդից հետո աշխատանքի կայանների և բուժումների տարածքների բոլոր սարքավորումները պատշաճ կերպով ախտահանվում են:
  - Ոչ ծակոտկեն առարկաները, օրինակ՝ նրբունելի (պինցետ) կամ մկրատ, լվացվում են տաք օճառաջրով, որպեսզի հնարավոր լինի վերացնել ցանկացած ֆիզիկական կեղտ: Դրանք պետք է պարզաջրվեն ու ամբողջությամբ չորացվեն, որից հետո առարկան ընկղմվում է Շրջակա Միջավայրի Պաշտպանության Գործակալության կողմից գրանցված ախտահանիչ հեղուկի մեջ՝ ինչպես նշված է արտադրողի ցուցումներում: Կոնտակտային ժամանակի վերջում առարկաները հանվում են, պարզաջրվում ու չորացվում մաքուր թղթե սրբիչով:
  - Էլեկտրական սարքերը, օրինակ՝ կտրիչները, խոշորացույց LED լամպերը, սրբիչների տաքացուցիչները և էսթետիկ սարքերը պետք է մաքրել ցողված անձեռոցիկով՝ վերացնելու ցանկացած ֆիզիկական կեղտ, որից հետո օգտագործել Շրջակա Միջավայրի Պաշտպանության Գործակալության կողմից գրանցված ցողիչ կամ անձեռոցիկ՝ պահպանելով արտադրողի ցուցումներում նշված կոնտակտային ժամանակը: Զգուշությամբ օգտագործեք ցողիչը, համոզվեք,

Կասեցված է՝ այլևս արդիական չէ

որ ձեր սարքն անջատված է հոսանքից, և մի ցողեք շարժիչի մեջ:

- Էլեկտրոնիկայի, օրինակ՝ պլանշետների, սենսորային էկրանների, ստեղնաշարերի, հեռակառավարման վահանակների և ATM սարքերի դեպքում մաքրեք տեսանելի կեղտը, եթե այդպիսին կա: Բոլոր մաքրող և ախտահանող ապրանքների համար հետևեք արտադրողի ցուցումներին: Կարող եք էլեկտրոնիկայի համար օգտագործել սրբվող ծածկոցներ: Եթե չկա արտադրողի ուղեցույց, կարող եք օգտագործել առնվազն 60% սպիրտային հիմքով անձեռոցիկներ՝ սենսորային էկրաններն ախտահանելու համար: Մանրակրկիտ ձևով չորացրեք մակերեսները՝ հեղուկի կուտակումից խուսափելու համար:

- ❑ Աշխատանքային կայանները մաքրվում և ախտահանվում են ամեն հաճախորդից հետո:
  - Ներառյալ շարժասայլակները, դարակները, ձեռքի հայելիները, մազերի խնամքի և այլ ապրանքներն ու տարաները:
  - Յուրաքանչյուր հաճախորդի համար տրամադրվում է նոր խալաթ կամ թիկնոց:
- ❑ Բուժման սեղանները յուրաքանչյուր օգտագործումից հետո պետք է ծածկվեն բուժման սեղանների համար նախատեսված թղթով, մաքուր սրբիչով կամ մաքուր սավանով:
- ❑ Սպիտակեղենը հեռացվում է (նույնիսկ եթե հաճախորդը դրանք չի օգտագործել), իսկ մահճակալը կամ սեղանը պատշաճ կերպով ախտահանվում է յուրաքանչյուր հաճախորդից հետո:
- ❑ Յուրաքանչյուր բուժական գործընթացի համար օգտագործված սպիտակեղենը, սրբիչները և այլ կտորները, այդ թվում՝ վերմակները և հաճախորդի կտորները հեռացնելիս աշխատողները կրում են մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ:
- ❑ Կեղտոտ սպիտակեղենը ներառյալ՝ սրբիչները և խալաթները, ամբողջությամբ տեղադրվում են փակ տարայի մեջ և նորից չեն օգտագործվում, մինչև պատշաճ կերպով կլվացվեն լվացքի առևտրային ծառայության կողմից կամ լվացքի գործընթացով, ինչը ներառում է լվացքի ընկղմում առնվազն 160º F ջրի մեջ՝ առնվազն 25 րոպե տևողությամբ: Մի թափահարեք կեղտոտ սպիտակեղենը:
- ❑ Մաքուր սպիտակեղենն ամբողջությամբ պահեք մաքուր, ծածկված տեղում: Համոզվեք, որ կեղտոտ սպիտակեղենի կամ լվացքի հետ գործ ունեցող աշխատակիցները կրում են ձեռնոցներ:
- ❑ Ամբողջ հաստատությունը ներառյալ՝ ապրանքների ցուցադրման տարածքները, առնվազն ամեն օր մաքրվում և ախտահանվում են:
- ❑ Հնարավորության դեպքում ավլելու կամ այլ մեթոդների փոխարեն անհրաժեշտ է հատակները մաքրել փոշեկուլով՝ կանխելու պաթոգենների տարածումը օդում:
- ❑ «Փորձարկվող» բոլոր ապրանքները հանվել և հեռացվել են:
- ❑ Զուգարանները և ձեռքերի լվացման հարմարանքները հագեցած են օճառով, թղթե սրբիչներով և զուգարանի թղթով և ամեն օր մաքրվում ու ախտահանվում են Շրջակա Միջավայրի Պաշտպանության Գործակալության կողմից հաստատված ախտահանիչով:
- ❑ Զուգարաններում բացակայում են ցանկացած ավելորդ ապրանքները, օրինակ՝ մոմեր կամ այլ պարագաներ:
- ❑ Որտեղ հնարավոր է (այդ թվում՝ զուգարաններում), տեղադրվում են առանց հպման աշխատող սարքավորումներ՝ վարակման վտանգը նվազեցնելու համար:
- ❑ Խստորեն խրախուսվում են անկանխիկ գործարքները: Ողջամտության դեպքում հաճախորդներին հնարավորություն է տրվում սահեցնել իրենց սեփական վարկային/դեբիտ քարտերը, իսկ քարտերը կարդացող սարքերը յուրաքանչյուր այցելուի օգտագործումից հետո մաքրվում են:

  Եթե հնարավոր չէ կատարել էլեկտրոնային կամ քարտային վճարումներ, հաճախորդները վճարում են ճշգրիտ կանխիկ գումարով կամ կտրոնով:

Կասեցված է, այլևս կիրառելի չէ

- ❑ Ընտրովի – Նկարագրել վարակի վերահսկման խթանմանն ուղղված այլ միջոցառումներ.

____

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ, ՄԱՇԿԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ԿՈՍՄԵՏՈԼՈԳԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- ❑ Աշխատողները և հաճախորդները պետք է ամբողջ ժամանակ դիմակ կրեն, բացառությամբ երբ ծառայություն է մատուցվում, որը հաճախորդից պահանջում է հանել իր դիմակը: Այն իրավիճակներում, որտեղ ծառայություն ստանալու համար հաճախորդը պետք է հանի իր դիմակը, աշխատողը դիմակից բացի պետք է ունենա նաև դեմքի վահան, և խստորեն խրախուսվում է աերոզոլի փոքր մասնիկներից պաշտպանող ավելի արդյունավետ դիմակ կրել, ներառյալ, բայց չսահմանափակվելով փորձված N95 դիմակով (նախընտրելի), KN95-ով կամ կրկնակի դիմակով: Դեմքի վահանները պարտադիր չեն այն աշխատողների համար, որոնք իրենց գործատուին ցույց են տալիս ապացույց՝ ամբողջապես պատվաստված լինելու վերաբերյալ, սակայն դիմակներ կրելը մնում է անհրաժեշտ պայման:
- ❑ Ամբողջովին պատվաստված աշխատողների համար, որոնք COVID-19-ի դեմ ամբողջովին պատվաստված լինելու մասին ապացույց են ներկայացրել և նախընտրում են դեմքի վահան չկրել, գործատուն պետք է ստեղծի և պահպանի գրավոր զեկույց, որը կփաստագրի, որ այս աշխատողներից յուրաքանչյուրը իրենց ներկայացրել է ամբողջովին պատվաստված լինելու մասին ընդունելի ապացույց: Գործատուից չի պահանջվում պահել ներկայացված ամողջովին պատվաստված լինելու մասին ապացույցի կրկնօրինակը:
  - ○ Մարդիկ համարվում են COVID-19-ի դեմ ամբողջովին պատվաստված 2 դեղաչափից բաղկացած պատվաստանյութի (Pfizer-BioNTech or Moderna) երկրորդ դեղաչափն ընդունելուց ≥2 շաբաթ անց, կամ մեկ դեղաչափից բաղկացած պատվաստանյութը ստանալուց ≥2 շաբաթ անց (Johnson and Johnson [J&J]/Janssen):
  - ○ Հետևյալ տարբերակներն ընդունելի են աշխատակցի կողմից գործատուին որպես COVID-19-ի դեմ ամբողջովին պատվաստման ապացույց ներկայացնելու համար՝ պատվաստման քարտ (որը ներառում է պատվաստված անձի անունը, տրամադրված պատվաստանյութի տեսակը և վերջին դեղաչափի տրամադրման ամսաթիվը) ԿԱՄ պատվաստման քարտի լուսանկարը՝ որպես առանձին փաստաթուղթ, ԿԱՄ այցելուի պատվաստման քարտի լուսանկարը, որը պահպանված է հեռախոսի կամ էլեկտրոնային սարքի մեջ ԿԱՄ պատվաստման մասին փաստաթուղթ առողջապահական ծառայություն տրամադրողից (որը ներառում է պատվաստված անձի անունը և հաստատում է, որ նա ամբողջովին պատվաստված է COVID-19-ի դեմ):
- ❑ Գեղագիտական խնամքի ծառայության ողջ ընթացքում և յուրաքանչյուր հաճախորդից հետո բոլոր պարագաների ու մակերեսների մաքրման և ախտահանման աշխատանքների ընթացքում պետք է կրել մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ:
- ❑ Խնամքի սենյակից դուրս գալուց առաջ աշխատողներից պահանջվում է հանել և դեն նետել ձեռնոցները, լվանալ ձեռքերը կամ ձեռքերի համար օգտագործել պատշաճ ախտահանիչ միջոց, իսկ խնամքի սենյակից դուրս գալուց օգտագործել թղթե սրբիչ կամ ախտահանող անձեռոցիկ՝ դուռը բացելու և փակելու համար:
- ❑ Մեկանգամյա օգտագործման բոլոր իրերը, ինչպիսիք են մեկանգամյա օգտագործման օձիքները, բամբակը, պարանոցի ժապավենները և կիրառիչները, օգտագործվում են մեկ անգամ և անմիջապես նետվում են: Ապրանքի նմուշները, ներառյալ դիմահարդարման պարագաները, չպետք է օգտագործվեն:
- ❑ Աղբամանն ունի կափարիչ և պարունակում է մեկանգամյա օգտագործման պլաստիկե տոպրակ:

Կասեցված է, այլևս կիրառելի չէ

- Աշխատողներից պահանջվում է ծառայություններն ավարտելուց անմիջապես հետո լվանալ իրենց ձեռքերը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՄԵՐՍՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ (ՈՉ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

- Ցանկացած ծառայության մատուցումից առաջ հաճախորդներից պահաջվում է լվանալ ձեռքերը:
- Օգտագործվում են մեկանգամյա օգտագործման դեմքի երեսպատման ծածկոցներ և/կամ սեղանը, սեղանի տաքացուցիչները, ամրացուցիչները և այլ իրերը պաշտպանվում են բարձի ծածկոցներով, որոնք կարող են հանվել և փոխարինվել նորով յուրաքանչյուր հաճախորդից հետո:
- Դեմքի մերսումների կամ դեմքի վրա ձեռքերով արվող այլ ծառայությունների համար պետք է օգտագործել ոչ լատեքսային ձեռնոցներ:
- Ձեռքերի խնամքի ծառայությունները մատուցվում են որպես ծառայության վերջին մաս:
- Աշխատողներից պահանջվում է մերսման ծառայություններն ավարտելուց հետո անմիջապես լվանալ իրենց ձեռքերը:
- Փակ լոգասենյակները, հանդերձարանները, լողավազանները, սաունաները և շոգեբաղնիքները բաց են հաճախորդների օգտագործման համար՝ 50% զբաղեցվածությամբ: Նշաններն ու հատակի գծանշումները պետք է օգտագործվեն՝ ապահովելու համար, որ պատշաճ ֆիզիկական հեռավորությունը պահպանվի, մինչ հաճախորդները գտնվում են հանդերձարաններում, լողավազաններում, սաունաներում և շոգեբաղնիքներում:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԷԼԵԿՏՐՈԼՈԳԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- Էլեկտրոլոգիական ծառայություն մատուցողներից պահանջվում է հաճախորդի բուժման ողջ ընթացքում կրել դիմակներ և օգտագործել մեկանգամ օգտագործման ձեռնոցներ:
- Նրբունելիները (պինցետները), գլանափաթեթները և ասեղները պահող կափարիչները յուրաքանչյուր հաճախորդից հետո պատշաճ կերպով մաքրվում և մանրէազերծվում են:
- Հնարավորության դեպքում օգտագործվում են մեկանգամյա օգտագործման զոնդերը, որոնք չեն պահանջում զոնդի ծայր կամ տարա: Եթե չեն օգտագործում մեկանգամյա օգտագործման զոնդի ծայրեր կամ տարաներ, էպիլյատորի ասեղի/զոնդի կրիչի շարժական ծայրը կամ տարան մաքրվում և ախտահանվում են յուրաքանչյուր հաճախորդից հետո:
- Էլեկտրոլիզի համար օգտագործվող բոլոր ասեղները մեկանգամյա օգտագործման են, նախապես փաթեթավորված և ստերիլ են ու դեն են նետվում օգտագործումից անմիջապես հետո՝ սուր առարկաների համար նախատեսված տարաներում: Սուր առարկաների տարաները պետք է նետվեն կենսաբժշկական թափոնների կանոնների համաձայն:
- Ինչպես ասոնիկ մաքրման միավորները, աքցանները և բոլոր տարաները, այդ թվում՝ դրանց շարժական մասերը, յուրաքանչյուր հաճախորդից հետո մաքրվում և ախտահանվում են՝ ըստ արտադրողի ցուցումների:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՄԱՐՄՆԻ ԱՐՎԵՍՏԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ, ԴԱՋՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԴԱԿՄԱՆ ՍՐԱՀՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- Մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ են պահանջվում դաջվածքների կամ դակման ողջ ընթացքում և հաճախորդների յուրաքանչյուր ընդունումից հետո բոլոր գործիքների և մակերեսների մաքրում և ախտահանում կատարելիս:

Կասեցված է՝ այլևս չի գործում

- Աշխատողները ձեռնոցներ հագնելուց առաջ և հանելուց անմիջապես հետո մանրակրկիտ լվանում են ձեռքերը օճառով և ջրով կամ օգտագործում են ձեռքի ախտահանող միջոց:
- Բերանի և քթի շրջանում դակման և դաջվածքի ծառայությունները թույլատրվում են: Այս ծառայությունները մատուցող աշխատակիցները պետք է դիմակի վրայից դեմքի վահան կրեն խստորեն խրախուսվում է, որ նրանք կրեն փոքր աերոզոլների տարածման դեմ ավելի արդյունավետ պաշտպանություն իրականացնող դիմակներ՝ ներառյալ, սակայն չսահմանափակվելով N95, KN95 և կրկնակի դիմակները: Հնարավորության դեպքում ծառայությունների մատուցման ընթացքում ավելացրեք օդափոխությունը:
  - Դեմքի վահանները ընտրովի են այն աշխատողների համար, որոնք իրենց գործատուին ցույց են տալիս լիարժեք պատվաստումների ապացույց. դիմակ կրելը դեռևս պարտադիր է:
  - Ամբողջովին պատվաստված աշխատողների համար, ովքեր COVID-19-ի դեմ ամբողջովին պատվաստված լինելու մասին ապացույց են ներկայացրել և ասիմպտոտ են դեմքի վահան չկրել, գործատուն պետք է ստեղծի և պահպանի գրավոր գրանցում, որը կփաստագրի, որ այս աշխատողներից յուրաքանչյուրը իրենց ներկայացրել է ամբողջովին պատվաստված լինելու մասին ընդունելի ապացույց: Գործատուից չի պահանջվում պահել ներկայացված ամբողջովին պատվաստված լինելու մասին ապացույցի կրկնօրինակը:
    - Մարդիկ համարվում են COVID-19-ի դեմ ամբողջովին պատվաստված 2 դեղաչափից բաղկացած պատվաստանյութի (Pfizer-BioNTech or Moderna) երկրորդ դեղաչափն ընդունելուց ≥2 շաբաթ անց, կամ մեկ դեղաչափից բաղկացած պատվաստանյութը ստանալուց ≥2 շաբաթ անց (Johnson and Johnson [J&J]/Janssen):
    - Հետևյալ տարբերակներն ընդունելի են աշխատակցի կողմից գործատուին որպես COVID-19-ի դեմ ամբողջովին պատվաստման ապացույց ներկայացնելու համար՝ պատվաստման քարտ (որը ներառում է պատվաստված անձի անունը, տրամադրված պատվաստանյութի տեսակը և վերջին դեղաչափի տրամադրման ամսաթիվը) ԿԱՄ պատվաստման քարտի լուսանկարը որպես առանձին փաստաթուղթ, ԿԱՄ այցելուի պատվաստման քարտի լուսանկարը, որը պահպանված է հեռախոսի կամ էլեկտրոնային սարքի մեջ ԿԱՄ պատվաստման մասին փաստաթուղթ առողջապահական ծառայություն տրամադրողից (որը ներառում է պատվաստված անձի անունը և հաստատում է, որ նա ամբողջովին պատվաստված է COVID-19-ի դեմ):
- Աթոռները դասավորված են այնպես, որ հաճախորդների միջև առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն ապահովվի: Հաստատությունները պետք է նկատի ունենան լրացուցիչ բաժանարար վահանների կամ այլ անթափանց խոչընդոտների կիրառումը, երբ դա անհրաժեշտ է:
- Աշխատակիցները տվյալ պահին միայն մեկ հաճախորդի են տրամադրում դաջվածքի կամ դակման ծառայությունների համար:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՄԱՏՆԱՀԱՐԴԱՐՄԱՆ ՍՐԱՀՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- Մատնահարդարման ծառայություններ տրամադրելուց առաջ հաճախորդները պետք է լվանան իրենց ձեռքերը:
- Հնարավորության դեպքում մատնահարդարման և ոտքերի հարդարման ծառայություններ իրականացնելու համար աշխատողի և հաճախորդի միջև դրվում է պլաստիկ բաժանարար՝ ձեռքերն ու ոտքերը սահեցնելու համար նախատեսված անցքերով:
- Յուրաքանչյուր կայանում աշխատում է միայն մեկ մատնահարդար՝ միաժամանակ միայն մեկ ծառայություն մատուցելով:

Կատեգորիա Է՝ ԱՅԼԱԿԱՆ ՊԻՏԱՆԻ Է

- ❑ Հաճախորդներին հրահանգվում է, որ նրանք ծառայության ողջ ընթացքում պետք է դիմակ կրեն:
- ❑ Երբ օդափոխությունը բավարար չէ, աշխատողներն օգտագործում են շնչառական սարքեր, որպեսզի նվազեցնեն թույլատրելի ազդեցության սահմաններից ցածր ազդեցությունը, որը սահմանված է Գլուխ 8-ի (Title 8) Բաժին 5155-ում: Քիմիական ազդեցության դեպքերում կիրառելի են միայն էլաստոմերային շնչառական սարքերը՝ ճշգրիտ քիմիական քարթրիջների և համապատասխան ֆիլտրի զուգակցումով:
- ❑ Ոտքերի հարդարման ամանները պետք է յուրաքանչյուր հաճախորդից հետո ախտահանվեն EPA-ով գրանցված ախտահանիչով, որը պիտակավորված է որպես մանրէները, սնկերը և վիրուսները ոչնչացնող: Տե՛ս խտության վերաբերյալ արտադրողի հրահանգները: Ջրապտույտային ոտքի սպաների, օդի շիթային ավազանների (air-jet basins) կամ առանց խողովակների ոտքի սպաների համար ախտահանիչը պետք է շրջանառվի առնվազն 10 րոպե: Ոտքերի սպաները, լողավազաններն ու ոտքերի հարդարման ամանները պետք է պատշաճ կերպով մաքրվեն և ախտահանվեն յուրաքանչյուր հաճախորդից հետո, նույնիսկ եթե օգտագործվում է մեկանգամյա օգտագործման պլաստիկ ծածկոց: Դրսում կատարված ոտքերի հարդարումը պետք է սահմանափակվի շարժական լոգարանների/ամաններով, և պետք է մաքրվեն և ախտահանվեն վերը նկարագրված և որպես մանրէասպան, ֆունգիցիդ և վիրուսասպան պիտակավորված EPA գրանցված հեղուկ ախտահանող միջոցներով: Ամբողջ ախտահանումը պետք է իրականացվի մատնահարդարման սրահի ներսում, այլ ոչ թե ժամանակավոր բացօթյա պայմաններում:
- ❑ Հպման կետերի քանակը նվազեցնելու համար մաշվի առեք եղունգների լաքի ցուցադրումը հեռացնելու տարբերակը: Եղունգների լաքի ցուցադրման բացակայության դեպքում կարող է օգտագործվել գունային ներկապնակ, որը յուրաքանչյուր հաճախորդի օգտագործումից հետո պետք է մաքրվի և ախտահանվի: Եթե եղունգների լաքի ցուցադրումը չի հանվել, նախքան ցուցադրին վերադառնալը պետք է մաքրել և ախտահանել եղունգների լաքերը: Հնարավորության դեպքում օգտագործվում են մեկանգամյա օգտագործման ապրանքներ: Ցանկացած ոչ-մեկանգամյա օգտագործման պարագա պետք է ամբողջությամբ ախտահանվի հաճախորդների միջև՝ համաձայն Կալիֆորնիայի Վարսավիրության և Կոսմետոլոգիայի Խորհրդի ուղեցույցների:
- ❑ Եթե սրահում կամ սրահից բացօթյա տարածքում օգտագործվում են օդափոխիչներ, ինչպիսիք են պատվանդանի օդափոխիչները կամ ամուր ամրացված օդափոխիչները, քայլեր են ձեռնարկվել՝ նվազագույնի հասցնելու օդափոխիչներից օդն անմիջապես մեկ անձից մյուսը փչելը: Եթե օդափոխիչները անջատված են կամ հեռացված, վերահսկեք հնարավոր ջերմային վտանգները և քայլեր ձեռնարկեք դրանք մեղմացնելու համար:
- ❑ Մեկանգամյա օգտագործման բոլոր իրերը, ինչպիսիք են ստվարաթղթե խարտոցները, փորվածքների և բուֆերների ավազի գոտիները, մեկանգամյա օգտագործման հողաթափերը, մատների բաժանարարները և կիրառիչները, օգտագործվում են միայն մեկ անգամ և անմիջապես նետվում են աղբարկղում, ծածկված աղբարկղի մեջ:

D. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- ❑ Այս արձանագրության պատճենը կամ COVID-19 Անվտանգության Համապատասխանության Վկայականի պատճենը, եթե կիրառելի է, տեղադրված է հաստատության բոլոր հանրային մուտքերի մոտ: Հավելյալ տեղեկությունների կամ COVID-19 անվտանգության համապատասխանության ինքնավավերագրման ծրագիրը լրացնելու համար՝ այցելեք http://publichealth.lacounty.gov/eh/covid19cert.htm: Ըստ պահանջի՝ հաստատություններն այս Արձանագրությունների պատճենը պետք է պահեն տեղում՝ հաստատության ներսում, վերանայման համար:

ԱՄԱՆԱԾ Է ԱՅԼԱՍԱՀՄԱՆԵՆ ՉԵ

Կասեցված է՝ այլևս ուժում չէ

- ❑ Բոլոր մուտքերի մոտ տեղադրվում է ցուցանակ, որը տեղեկացնում է հաճախորդներին, որ ժամանման պահին ստուգվելու են նրանց ախտանշանները, պահանջվում է օգտագործել ձեռքերի ախտահանիչ միջոց և կրել դիմակ:
- ❑ Տեղադրվում է ցուցանակ, որը հաճախորդներին հիշեցնում է պահպանել վեց (6) ոտնաչափ սոցիալական հեռավորություն, մուտք գործելիս լվանալ ձեռքերը կամ օգտագործել ախտահանիչ միջոց, հիվանդ լինելու կամ COVID-19-ի ախտանշանների նման ախտանշաններ ունենալու դեպքում մնալ տանը և հաղորդել ծառայության փոփոխությունների մասին: Ցուցանակները պետք է տեղադրվեն պարզ տեսանելի վայրերում, պետք է ներառեն պատկերագրեր և հասանելի լինեն մի քանի տարբերակով (օր.՝ էլ. փոստի միջոցով): Տե՛ս [Շրջանի Հանրային Առողջապահության Վարչության COVID-19 Ուղեցույցի]() կայք-էջը՝ լրացուցիչ աղբյուրների և ցուցանակների օրինակների համար, որոնք կարող են օգտագործվել ձեռնարկությունների կողմից:
- ❑ Ցուցանակներ են տեղադրվում ցուցադրման տարածքներով՝ հաճախորդներին տեղեկացնելու, որ այն ամեն օր մաքրվում և ախտահանվում է:
- ❑ Հաստատության առցանց վաճառակետերը (կայքը, սոցիալական լրատվամիջոցները և այլն) հստակ տեղեկատվություն են տրամադրում հաստատության աշխատանքային ժամերի, դիմակների օգտագործման պահանջի, ժամադրություններ ձեռք բերելու քաղաքականությունների, դրսում կամ մեքենայում իրենց հանդիպմանը սպասելու, նախապես պատվիրելու, նախապես վճարելու, վերցնելու և /կամ այլ կարևոր հարցերի մասին:

E. ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆԱՉԱՌ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- ❑ Առաջնահերթություն է տրվել հաճախորդների/պատվիրատուների համար կարևորագույն ծառայություններին:
- ❑ Այն գործարքները կամ ծառայությունները, որոնք կարող են հեռակա կարգով առաջարկվել, արվում են առցանց:
- ❑ Ձեռնարկվում են միջոցառումներ ապրանքների և ծառայությունների հասանելիություն ապահովելու այն հաճախորդների համար, որոնք ունեն շարժունակության սահմանափակում և/կամ հանրային տարածքներում գտնվում են բարձր վտանգի տակ:

Վերոհիշյալ միջոցառումներում չներառված ցանկացած լրացուցիչ միջոցառում պետք է նշվի առանձին էջերի վրա, որոնք բիզնեսի սեփականատերը պետք է կցի այս փաստաթղթին:

Այս արձանագրության մասին ցանկացած հարցի կամ մեկնաբանության համար կարող եք կապվել հետևյալ անձի հետ.

Բիզնեսի կոնտակտային անուն՝ ______________________________

Հեռախոսահամար՝ ______________________________

Վերջին վերանայման ամսաթիվ՝ ______________________________